

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----„ ----- 2016 թ.

„-----„ ----- 2016 թ.

(արձանագրություն N°)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԲԱԺՆԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հրատարակչական-խմբագրական բաժինը կառուցվածքային ստորաբաժանում է, որը նախապատրաստում և տպագրության է հանձնում «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տեղեկագիր» գիտական պարբերականը, գիտական աշխատությունների ժողովածուներ, մեթոդական ցուցումներ, աշխատանքային տետրեր և այլ բնույթի ուսումնական և գիտական գրականություն:
- 1.2. Հրատարակչական-խմբագրական բաժնի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ մշակույթի նախարարության հրատարակչական գործի գործակալության նորմատիվային փաստաթղթերով, ՀԱԱՀ կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:

2. ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1. Բաժինը կատարում է ձեռագրերի հետ կապված բոլոր աշխատանքները (խմբագրում, սրբագրում և այլն):
- 2.2. Անհրաժեշտության դեպքում բաժինը լրացուցիչ գրախոսման է ներկայացնում վիճահարույց ձեռագրերը և արդյունքի մասին տեղեկացնում համալսարանի ղեկավարությանը՝ վերջնական որոշում ընդունելու նպատակով:

2.3. Հրատարակման ներկայացվող նյութերը ձևակերպվում են ըստ գոյություն ունեցող նորմատիվային փաստաթղթերի և ՀՀ լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի որոշումների:

3. ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Հրատարակչական-խմբագրական բաժինը ղեկավարում է բաժնի վարիչը, որը նշանակվում և ազատվում է պաշտոնից ՀԱԱՀ ռեկտորի հրամանով:

3.2. Բաժնի վարիչն ընդգրկվում է ուսումնամեթոդական հանձնաժողովին կից խմբագրական կոլեգիայի կազմում:

3.3. Բաժնի վարիչը կազմակերպում է բաժնի աշխատանքները, հետևում կարգապահությանը, միջոցներ ձեռք առնում աշխատողների որակավորման բարձրացման ուղղությամբ, պատասխանատու է բաժնին հատկացված գույքի պահպանման համար: